Թոքախտաւորը կարող է հիւանդացած լինել ոչ անպատճառ շնչառութեան գործարանների միջոցով, այլ և աղիքների, մաշկի միջոցով։

Այս հարցն ունի թէ գիտական և թէ գործնական նշանակութիւն, մանաւանդ երբ խնդիրը վերաբերում է կանխելու միջոցներին։ Իւրաքանչիւր թոքախտաւոր պէտք է լաւ յիշի, որ ինքն աղբիւր է ուրիշների վարակման, որ իրենից դուրս եկած ցուպիկները *) (bacille) ընկնելով օդի մէջ, ուտելիքի և խմելիքի մէջ, միշտ էլ կարող են վարակել ուրիշներին. թոքախտաւորին շրջապատողներն ու մերձաւորները իմանալով այս, միջոցներ պէտք է գործադրեն, որ չվարակուին. նրանք չպէտք է մոռնան, որ վարակումը տեղի է ունենում բոլորովին աննկատելի կերպով, որ վարակուելը չունի նախնական նշաններ, որոնց շնորհիւ կարելի լինի վաղօրօք իմանալ վարակուածութիւնը։

Միևնոյն ժամանակ պէտք է իմանալ և այն, որ բոլոր ներս մտած մանրէները հիւանդութիւն չեն առաջ բերում։ Այն կազմուածքը, որն ուժեղ է, որն ի վիճակի է դիմադրել ներս մտած մանրէներին, որն ի վիճակի է յաղթահարել նրանց, չի հիւանդանում. իսկ այն կազմուածքը, որը կորցրել է իր դիմադրական ուժերը, տեղի է տալիս իր մէջ ներս խուժած մանրէներին, տկարանում է և զոհ է գնում հիւանդութեանը։

Կենցաղի և աշխատանքի պայմանների բարելաւումով կարելի է բարձրացնել կազմուածքի դիմադրական ուժը. ֆիզիքական մարզանքով կարելի է չեզոքացնել կենցաղի և աշխատանքի բացասական ազդեցութիւնը։

Ահա թէ ինչն է պատճառը, որ վարակման համար մանրէների մուտքի դուռն ունի երկրորդական նշանակութիւն. գլխաւոր տեղը պատկանում է կազմուածքի կառուցուածքին և նրա պահպանութեանը։

Երեւան

ԲԺ. Ա. ՄԵԼԻՔԵԱՆ
Առողջապահական Ժողովրդական Կոմիսարեատի
Սանիտարական Լուսաւորութեան Ենթաբաժնի վարիչ

(*) Տիւպերկիւլոզի մանրէն փոքրիկ ցուպի մը ձեւն ունի։

ՎԻԼՄԷՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ

Հոկտեմբերի մէջ Ֆրանսան տօնեց Ֆրանսայի զինուորական բժիշկ Վիլմէնի ծննդեան հարիւրամեակը (1827—1897)։ Վիլմէն երկարատեւ դիտողութիւններէ եւ փորձերէ վերջ ցոյց տուաւ, 1865—66 թուականներուն, ա) թէ թիւպերկիւլոզը (թոքախտ, եւն.) մեծ համամատութեամբ զոհեր կ'ընէ հոն, ուր ժողովուրդը խճողուած է։ թէ բազմաթիւ վայրենի ժողովուրդներ, Եւրոպացիներու հետ շփում ունենալէ առաջ, զերծ էին այդ հիւանդութենէն. բ) թէ թիւպերկիւլոզը կարելի է ուրիշին փոխանցել, հետեւաբար վարակիչ է, ուրեմն միքրոպ մը ունի։ Այդ միքրոպը գտաւ 1882 ին գերմանացի Քոխը։ Թիւպերկիւլոզի պատմութեան մէջ պէտք է միշտ յիշել Լաէնէքի, Վիլմէնի եւ Քոխի անունները։